

թիւն նորին զԴէորդ քահանայն Արամեան Թիֆլիզեցի և զԱնդրևս քահանայն Գանձակեցի:

Զ. Կոնդակ նոյնոյ -յՅն սեպտ. 1851. հմ. 301- առ Աթանաս աղայ Լալայեանց վասն ստացման 31 փութ զեղին մոմոց:

Է. Կոնդակ նոյնոյ -ի 26 յունվարի 1852. հմ. 33- առ աղայ Դէորդ և Կարապետ և Մարգար և Մկրտիչն Լալայեանց վասն պահպանութեան հին և նոր եկեղեցեաց Զամախի քաղաքի:

Ը. Կոնդակ նոյնոյ -ի 15 նոյեմ. 1854. հմ. 406- առ աղա Աթանաս Լալայեանց վասն օժանդակելոյ քննիչ Ստեփաննոս քահանային Մանգլինեանցը, ի ժամանակս քննութեանն:

Թ. Կոնդակ Մատթէոս կաթողիկոսի -ի 26 ապրիլի, 1861 ամի հմ. 197- առ սարոն Աթանասն Լալայեանց վասն ընդունելութեան առաջնորդ Դէորդ եպիսկոպոսի Երեւանցւոյ և օժանդակելոյ նմին յամենայն եկեղեցական և գաղղոցական գործս:

Թէ և Ազուանից աշխարհումն մինչանաւոր հնութիւն չկարացի գտնել, ինչպէս քանիցս ասել եմ, բայց դառած մասնաւոր գրութիւններն և ցուցակներն և քանի կոնդակներն հնութեան տեղ հաշուելով՝ արտագրեցի զբոլոր մէջ «Զարք հնութեանց Ազուանից» անուանելով, որպէս և հետեւեալ գրութիւնն է Յօհան արքեպիսկոպոսի, յուսալով որ՝ անշուշտ որ և է օգուտ կարող են տալ ընթերցողին. այն է՝ մի տեղեկութիւն չլսած և և չիմացած անցքերի վրայ. ինչպէս ես եւս կարգալով՝ բաւական մտաւոր գիտութիւն, հարստութիւն եմ ձեռք բերել այն գրութիւններից:

Ըսածս լաւ կը հասկանան փորձառու բանագէտք և հնագէտք, ինչպէս և յարգոյ բարեկամս պարոն Աղէքսանդր Երիցեանը, որ ինձանից աւելի աշխատասէր և հասէր լինելով՝ զիղել է առաջին բաւական այնպիսի գրութիւններ:

Զամախեցւոց քաջածանօթ Յօհան արքեպիսկոպոսի մի գրութիւնը յանուն թարգմանիչ պարոն Յօհաննի -թվին ՌՄԿԳ (1813)- արտագրելով այս տեղ՝ կամեցայ նախ դարուս սկզբներիւմ՝ 81 տարի յաւաջ եղած գիտութեան չափը ցոյց տալ,